

N 22-34  
15.04.2022

ՀՀ արդարադատության նախարար  
պարոն Կարեն Անդրեասյանին/

### ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,


ՀՀ ԱՆ ֆրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական գիտորդների խմբի անդամները (այսուհետ՝ խումբ) 2022թ. ապրիլի 14-ին ՀՀ ԱՆ «Արմավիր» ԲԿՀ կատարած այցելության ժամանակ առանձնագրույց են ունեցել դատապարտյալ ԱՇոտ Գուրգենի Ալեքյանի հետ, ով գտնվում էր բուժմասում: Զրույցի ժամանակ վերջինս հայտնել է, որ արդեն 13 տարի է պատիժ է կրում, որից 12 տարին տառապում է շաֆարային դիաբետով և ստանում է 108 միավոր ինսուլին յուրաքանչյուր օր: Նրա ոտքը անպուտացված էր, անձը տեղաշարժվում էր սայլակով: Ա.Ալեքյանը նաև հայտնել է, որ հիվանդության պատճառով սկսել է նաև կուրանալ:

«Արմենիա» ԲԿ-ի կողմից 17.03.2022թ. տրված թիվ 32 տեղեկանքի համաձայն՝ «նրա տեսողությունը  $OD=0,01$ , կոոր. չի օգնում,  $OS=0,01$ »: Բժշկական հանձնաժողովը, ֆինաբիլելով Ա.Ալեքյանի հիվանդությունների՝ պատժի հետ անհամատեղելիության հարցը, 29.03.2022թ եզրակացության մեջ եզրահանգել է, որ անձը պետք է կրկին հետազոտվի: Խմբի անդամները, ուսումնասիրելով Հանձնաժողովի՝ 29.03.2022թ. եզրակացությունը, արձանագրել են, որ այնտեղ չկա որևէ անդրադարձ «Արմենիա» ԲԿ-ի կողմից 17.03.2022թ. տրված թիվ 32 տեղեկանքին, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ Հանձնաժողովի՝ 29.03.2022թ. եզրակացությունը չի արտացոլում հիվանդությունների ամբողջական պատկերը, այն չի հանդիսանում օբյեկտիվ և բազմախոսի ուսումնասիրության արդյունք:

Ա.Ալեքյանը նաև հայտնել է, որ յուրաքանչյուր օր տեսողությունն ավելի է վատանում, պատճառ բուժօգնություն չեն տրամադրում, առաջարկում են, բողոքներն ու դիմումները ներկայացնել գրավոր, սակայն տեսողության պատճառով չի կարողանում գրել և հայտնվել է անելանելի վիճակում:

Վերագրյալի հիման վրա առաջարկում ենք շտապ ապահովել ԱՇոտ Ալեքյանի պատճառ բուժօգնությունը, ինչպես նաև պարտավորեցնել բժշկական հանձնաժողովին կրկին ֆինաբիլել Ա.Ալեքյանի հիվանդությունների պատժի հետ անհամատեղելիության հարցը՝ ներառելով «Արմենիա» ԲԿ-ի կողմից 17.03.2022թ. տրված թիվ 32 տեղեկանքը:

Միևնույն ժամանակ առաջարկում ենք ծառայողական ֆննություն անցկացնել պարզելու, թե ինչու «Արմենիա» ԲԿ-ի կողմից 17.03.2022թ. տրված թիվ 32 տեղեկանքը Հանձնաժողովի կողմից չի դարձել ֆննության առարկա, այն անվտուրությամբ արդյունք էր, թե՞ գիտավորության:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱԿԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Հարգանքով՝

Խմբի նախագահ

Զարուհի Հովհաննիսյան